

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհրդի 2018թ. նոյեմբերի 3-ի նիստի
Գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 45-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ընտրություններ:
2. Գիտական կոչումների շնորհում:
3. Համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրի մասին:
Ձեկ. Մկրտիչ Ավագյան
4. 2019-2020 ուստարվա վարձավճարների մասին:
Ձեկ. Մհեր Մելիք-Բախշյան
5. Ուսանողական խորհրդի գործունեության մասին:
Ձեկ. Պարույր Գալստյան
6. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը ներկաներին
առաջարկեց հաստատել նիստի օրակարգը, եթե նրանք այլ առաջարկություններ
չունեն:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

Պարոն Միրզախանյանը ծննդյան հոբելյանի առթիվ շնորհավորեց
համալսարանի չորս դասախոսների և նրանց շնորհեց դրամական պարգև:

Լսեցին – Հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ
Աելիտա Դոլուխանյանի հաղորդումը Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի ընտրության
մասին:

Տիկին Դոլուխանյանը ներկայացրեց Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի թափուր
պաշտոնի թեկնածու, Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնակատար,
մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ Նաիրա Դալյանի
գիտամանկավարժական գործունեությունը: Տիկին Դոլուխանյանն ասաց, որ
հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովը որոշում է կայացրել

գիտական խորհրդին ներկայացնել Նաիրա Դալյանի թեկնածությունը՝ Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրությանը մասնակցելու համար:

Որոշեցին – Նաիրա Դալյանի թեկնածությունը դնել փակ գաղտնի քվեարկության:

Լսեցին – Գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը համալսարանի երեք դասախոսների գիտական կոչումներ շնորհելու մասին:(Կից՝ տես ցուցակը):

Որոշեցին – Համալսարանի դասախոսներ Սոնա Դավթյանի, Աղվան Մխիթարյանի և Քնարիկ Ուզունյանի թեկնածությունները դնել գաղտնի քվեարկության:

Լսեցին – Չայներ հաշվող հանձնաժողովի ընտրության մասին:

Որոշեցին – Ստեղծել ձայներ հաշվող հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Աշոտ Գալստյան- նախագահ
2. Հեղինե Խաչատրյան
3. Զվարթ Ամբրոյան
4. Շահանե Գրիգորյան
5. Էդվարդ Սարյան

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Գալստյանի հաղորդումը Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի ընտրության քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկության արդյունքներն են.

Նաիրա Դալյան (Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնի համար) - 42 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

1. Որոշեցին –

– Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 45-ը, 42 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ Նաիրա Երվանդի Դալյանին համարել ընտրված Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնում:

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Գալստյանի հաղորդումը գիտական կոչումների շնորհման քվեարկության արդյունքների մասին:

Դավթյան Սոնա (դոցենտի կոչման համար) – 45 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Մխիթարյան Աղվան (դոցենտի կոչման համար) – 42 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Ուզունյան Քնարիկ (դոցենտի կոչման համար) – 43 կողմ, 0 դեմ, 2 անվավեր քվեաթերթ

2. Որոշեցին –

- Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 45-ը, 45 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Սոնա Ռաֆիկի Դավթյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 45-ը, 43 կողմ, 0 դեմ, 2 անվավեր քվեաթերթ/ Կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Քնարիկ Նելսոնի Ուզունյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 45-ը, 42 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Կերպարվեստի ամբիոնի ասիստենտ Աղվան Զալիբեկի Մխիթարյանին <<Կերպարվեստ>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(դ) կետի, և դիմել ՀՀ ԲՈԿ այդ որոշումը հաստատելու խնդրանքով:

Լսեցին - Համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրի մասին:(Զեկ՝ Մկրտիչ Ավագյան):

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Մկրտիչ Ավագյանը ներկայացրեց ծրագրով նախատեսված նպատակներից յուրաքանչյուրի կատարման ընթացքն ու արդյունքները՝ մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներից մինչև որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետության բարձրացման միջոցներ: «2017 թվականին բուհի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաշխատողների, ասպիրանտների և

հայցորդների կողմից հրատարակվել են 575 հոդված, որից 164-ը SCOPUS, PIIHL և այլ պարբերականներում, 10 մենագրություն, 95 ձեռնարկ, 60 գիրք: Միջազգային պարբերականներում տպագրված հոդվածներից 114-ը գիտական հղումների ռուսաստանյան ցուցիչում (PIIHL) են, իսկ մյուս 50-ը՝ միջազգային այն պարբերականներում, որոնք ընդգրկված են Web of Science, Web of Knowledge, Scopus, British Library և այլ հեղինակավոր շտեմարաններում»,-անդրադառնալով համալսարանում գիտահրատարակչական գործունեության մասին՝ նշեց Մկրտիչ Ավագյանն ու կատարած աշխատանքում ընդգծեց նաև դասագրքաստեղծ գործունեությունն ու «Իմաստություն» հանդեսի՝ 2017 թվականից Հրատարակչական էթիկայի հանձնաժողովի (COPE - Committee on Publication Ethics) անդամ լինելն ու Scopus-ի շտեմարանում ընդգրկվելը: Ձեկույցում անդրադարձ կատարվեց նաև համալսարանի ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված ֆինանսական պլանավորման, համալսարանի կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան անհրաժեշտ լսարանային, ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազան արդիականացնելու, հասարակության հետ կապը զարգացնելու, ընդլայնելու ուղղությամբ կատարված և կատարվելիք աշխատանքներին: Գիտական խորհրդում ևս մեկ անգամ քննարկվեց համալսարանի միջազգային կապերը ընդլայնելու և բազմազանեցնելու, միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում խթանելու անհրաժեշտության մասին: Ռեկտորը բավարար համարեց Ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի իրականացման ընթացք և հավելեց, որ պետք է ձգտել բարձրացնել եղած ցուցանիշները՝ համատեղ և լուրջ աշխատանքի շնորհիվ: «Բուհը պետք է լինի հետազոտական և բակալավրիատի, և մագիստրատուրայի ուսանողների համար, որոնք գիտահետազոտական միավորների զարգացման անդուրսում պետք է ներգրավվեն հետազոտական աշխատանքներում»,-նշեց ռեկտորն ու հավելեց, որ դա կրթի նոր որակ բարձրագույն կրթության համակարգում: Ռուբեն Միրզախանյանը առանձնակի կարևորեց նաև բուհի միջազգայնացման ուղղությամբ կատարվող

աշխատանքները տարբեր հարթակներում՝ արտասահմանցի ուսանողների, դասախոսների ներգրավումից մինչև հանրակացարանների ստեղծում և այլ աշխատանքներ:

3.5 Որոշեցին – Համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի միջնաժամկետ գործողությունների կատարողականի ընթացքը համարել բավարար:

Լսեցին -2019-2020 ուստարվա վարձավճարների մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

Ուսումնական գործընթացների հարցերի գծով պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյանը Գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց հաջորդ ուսումնական տարուց բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի և նախապատրաստական բաժնի ուսման վարձերի որոշման նախագիծը: Պրոռեկտորն ընդգծեց, որ որոշմանը նախորդել են դեկանների հետ հանդիպումները, հաշվի առնվել բոլոր առաջարկներն ու նկատառումները: Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն օրակարգում ընդգրկված հարցի շրջանակներում խոսեց նաև բուհի շրջանավարտներին աշխատանքով ապահովելու կարևորության մասին և ընդգծեց, որ առաջին հերթին անհրաժեշտ է ամրապնդել բուհ-աշխատաշուկա, մասնավորապես՝ բուհ-դպրոց կապը:

4. Որոշեցին – Հաստատել Համալսարանի.

ա/ 2019-2020 ուսումնական տարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ըստ մասնագիտությունների (առկա և հեռակա) համակարգերի ուսման վարձերը և մեկ կրեդիտի արժեքը՝ համաձայն հավելված 1-ի,

բ/ 2018-2019 ուսումնական տարվա նախապատրաստական բաժնի ուսման վարձերը ըստ մասնագիտությունների՝ համաձայն հավելված 2-ի:

Լսեցին - Ուսանողական խորհրդի գործունեության մասին:(Զեկ.՝ Պարույր Գալստյան):

ՈւԽ-ի նախագահ Պարույր Գալստյանը Գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց անցնող տարում կառույցի կատարած աշխատանքը, որի հիմքում եղել է ուսանողակենտրոն քաղաքականությունը: Մշակութային, սպորտային միջոցառումներ, մասնակցություն բազմաբնույթ ծրագրերի, միջազգային

համագործակցության ընդլայնում և այլն. այս և այլ աշխատանքների կողքին Պարույր Գալստյանը խոսեց նաև անելիքների, մասնավորապես՝ ամենամյա «Լավագույն ուսանող» մրցույթի մասին: Գիտական խորհուրդը կառույցի ուշադրությունը հրավիրեց ուսանողներին հուզող խնդիրների վերաբերյալ ընդհանրական վերլուծություններ կատարելու, տարբեր ծրագրերում առավել մեծ թվով ուսանողներ ներգրավելու, նրանց սոցիալական խնդիրներն ու պահանջները հաշվի առնելու անհրաժեշտության և կարևորության վրա:

5.Որոշեցին –

1. Ուսանողական խորհրդի գործունեության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. Ուսանողական խորհրդի ուշադրությունը հրավիրել հետևյալ աշխատանքների վրա.
 - Կատարել ընդհանրական վերլուծություն ուսանողներին հուզող խնդիրների վերաբերյալ:
 - Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող ծրագրերին և միջոցառումներին ներգրավել առավել շատ թվով ուսանողներ:
 - Ուսանողական խորհրդի աշխատանքների համար հիմք ընդունել ուսանողների սոցիալական խնդիրներն ու պահանջները:
 - Ընդլայնել կապերը արտերկրյա ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների հետ, ինչպես նաև առավելապես նպաստել ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացմանը:

Ընթացիկ հարցեր.

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Ն/Դ մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ Սուսաննա Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման, Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Հասմիկ Այվազյանի թեկնածուական ատենախոսության թեման, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Սոֆյա Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեման, Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի հայցորդ Աշոտ Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեման, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի

ամբիոնի հայցորդ Սառա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու մասին:

6. Որոշեցին –

- Հասմիկ Այվազյանի <<Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդիրը ժամանակակից հանրակրթական դպրոցում <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման գործընթացում>> /ԺԳ.00.02.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման հաստատել: (Գիտական ղեկավար՝ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արտակ Մահրադյան):
- Սոֆյա Հովսեփյանի <<Աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող արտթերապևտիկ միջամտության կազմակերպման մանկավարժական պայմանները>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման հաստատել: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյան):
- Աշոտ Մանուկյանի <<Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման հաստատել: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Գրետա Հակոբյան):
- Սառա Մարգարյանի <<Ուսուցման ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման մեթոդիկական տարրական դասարանների մաթեմատիկայի ուսուցման գործընթացում>> /ԺԳ.00.02.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման հաստատել:(Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Այվազյան):
- Սուսաննա Ղազարյանի <<Ավագ նախադպրոցականի համապիտանի ուսումնական գործողությունների ձևավորման մանկավարժական պայմանները տարրական դպրոցին նախապատրաստման փուլում>> թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատումը հետաձգել՝ գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովում մեկ անգամ ևս քննարկելու համար:

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան

Գրիգորյանի <<Երեխաների և դեռահասների ֆիզիկական զարգացման գնահատումը>> ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

7.Որոշեցին - Նշված ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկա ամբիոնի հայցորդ Նաիրա Թոռունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին:

8.Որոշեցին – Նաիրա Թոռունյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել <<Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները>> /ԺԳ.00.02.թվանիշով/ վերնագրով: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյան):

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ